Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
Armenian Territorial Development Fund

N 4/01/616-23 «07» 04 2023թ.

«Մաշխ» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Ի. Ավագյանին

Հարգելի պարոն Ավագյան

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը **«ՄԱՇԽ»** ՍՊԸ-ի հետ 2022 թվականի օգոստոսի 25-ին կնքել է «Դպրոցական կահույքի մատակարարման» պետական գնման թիվ **ՈՍԱԲԾ-ՀԲՄ-ԱՊՁԲ-2022/1/3** պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

2022 թվականի նոյեմբերի 29-ին կնքված Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին **Համաձայնագիր 1-ի** առաջին կետով Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետ է սահմանվել **120 օր** Հանձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից, այն է՝ **2023 թվականի մարտի 28-ը**: Սակայն, Համաձայնագրով նախատեսված ժամկետում ապրանքները չեն մատակարարվել:

Հաշվի առնելով նկարագրվածը և ղեկավարվելով Պայմանագրի 6.1., 6.2., 6.3. կետերի, ինչպես նաև **2.1.7.** կետի դրույթներով, որոնք սահմանում են, որ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Վաճառողն էականորոն խախտել է Պայմանագիրը, այն է՝ <...բ) ապրանքի մատակարարման ժամկետը խախտել է 10 օրից ավելի>, կայացվել է որոշում.

1. Համարել ապրանքների մատակարարման պետական գնման թիվ **ՈՍԱԲԾ-ՀԲՄ-ԱՊՁԲ-2022/1/3** պայմանագիրը լուծված.
2. Պայմանագրով նախատեսված կատարման ժամկետը խախտելու համար սահմանել տույժ՝ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0, 05% չափով, որը կազմում է **460,980** դրամ (7,092,000x130x0,0005).
3. Պայմանագրի Հավելված 1-ի Տեխնիկական բնութագիր- գնման ժամանակացույցով նախատեսված պայմանները խախտելու համար սահմանել տուգանք՝ պայմանագրի գնի 0, 5% չափով, որը կազմում է **35,460** դրամ (7,092,000x0,005).

Նշված գումարները խնդրում ենք սույն փաստաթուղթը հրապարակելուց 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում փոխանցել ՀՏՀՀ-ի բանկային հաշվին՝ Արարատբանկ ԲԲԸ 1510032335590400:

Հայաստանի Հանրապետություն, 375037, Երևան, Կ. Ուլնեցու 31
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123
K. Ulnetsu st. 31, Yerevan, 375037, Republic of Armenia
"/Fax: (37410) 240 159 " (37410) 247 123

Սույնով տեղեկացնում ենք Ձեզ նաև, որ ղեկավարվելով Ձեր կողմից ներկայացված և **Համաձայնագիր 1-ի Հավելված 4.2.** հանդիսացող Որակավորման ապահովման տուժանքի մասին համաձայնագրի 1.3 կետի և Հավելված 5.1. հանդիսացողՊայմանագրի ապահովման տուժանքի մասին համաձայնագրի 1.3 կետի դրույթներով, թիվ **ՈՍԱԲԾ-ՀԲՄ-ԱՊՁԲ-2022/1/3** Պայմանագիրը ոչ պատշաճ կատարելու համար ՀՏՋՀ-ն մտադիր է դիմել «ՎՏԲ - Հայաստան բանկ» Կամո մ/ճ **1,777,200** (1,068,000+709,200) դրամ գումար ստանալու պահանջով: Տուժանքի համաձայնագրերով նախատեսված գումարների պահանջները ներկայացնելու օրվանից 10 (տաս) աշխատանքային օրվա ընթացքում այն չստանալու դեպքում, **«ՄԱՇԽ»** ՍՊԸ-ի տվյալները փոխանցվելու են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ համապատասխան ցուցակում ընդգրկվելու համար:

Հարգանքով՝

Գործադիր տնօրեն 07/04/2023 **Ս. Բաղինյան**

ՍԱՐԳԻՍ ԲԱՂԻՆՅԱՆ

Signed by: BAGHINYAN SARGIS 1404640118

Կատարող՝ Ա. Իսախանյան
Հեռ. (010) 24 71 23/106